

«ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ ՄԵԾ ՎՏԱՆԳ ԵՆ  
ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ, ԺՈՂՈՎՐԴԻ  
ԵՒ ՀԱԻԱՏԻ ՀԱՄԱՐ»

Հայ Առաքելական եկեղեցու Արցախի Թեմի Առաջնորդ Պարգեւ Եպիսկոպոս Մարտիրոսեանը խօսք է լոյս հայ ժողովրդին՝ Եհովայի վկաների՝ Արցախ թափանցելու կապակցութեամբ:

Նրանում մասնաւորապէս ասուած է.

Եկեղեցու, քրիստոնէական բարոյականութեան տեսակետից այսօր կարող ենք փաստել, որ յետխորհրդային տարածում, մասնաւորապէս, Հայաստանում, արշաւանք է սկսել ամբողջատիրական աղանդի կամ էլ նման աղանդներից մէկի՝ «Եհովայի վկաներ» ահաւոր կազմակերպութեան կողմից: Կազմակերպութիւնը ներթափանցել է Արցախ եւ արմատաւորուել մեզ մօտ:

Ովքե՞ր են «Եհովայի վկաներ»ը, եւ ի՞նչ է իրենից ներկայացնում այդ աղանդը: Այն ծագել է Միացեալ Նահանգներում, 19րդ դարի վերջին: Հիմնադիրը հանրայատ սկանդալիստ Ջարլզ Ռասըլն է: Կազմակերպութեան կենտրոնը գտնուում է Պրուէլինում (Նիւ Եորքի թաղամասերից մէկը): Աղանդի տպագիր մարմինը՝ «Դիտաշտարակը», բազմամիլիոն տպաքանակ ունի, ինչը վկայում է աղանդի հսկայական գումարների մասին: Աղանդը հիմնականում տարածուում է քրիստոնէական երկրներում:

Ինչո՞վ են գրադուում «Եհովայի վկաները»: Առաջին հերթին ակտիվօրէն հաւաքագրում են նոր աշակերտներ՝ հետեւորդներ: Փորձում են աղաւղել Աստուածաշունչը, աշակերտներին Սուրբ Գիրքը մատուցել իրենց համար շահեկան ձեւով: Նրանք ենթատեքստից հանում են

արտայայտութիւններ եւ սեփական մեկնաբանութիւններ տալիս դրանց: Նման պարագայում մարդկանց համար, ի հարկէ, դժուար է որոշել այդ մեկնաբանութիւնների նշմարտացիութիւնը, յատկապէս նրանց համար, ովքեր ծանօթ չեն Աստուածաշնչին:

Եհովայի վկաները ձգտում են նրանց տրամադրել եկեղեցու, կրօնական ծեսերի եւ խորհուրդների, եկեղեցու սպասաւորների, մեր հայրերի հաւատին ընդդէմ: Եհովայի վկաները իւրովի թարգմանել են Աստուածաշունչը անգլիերէն եւ այնտեղ «Աստուած», «Տէր», «Միածին որդի» բառերը փոխարինել են «Եհովա» բառով: Դա Աստուածաշնչեան պատուիրաններից մէկի անմիջական խախտումն է (Եթէ որեւէ մէկը փոխի ինչ-որ բառ, աւելացնի, պակասեցնի կամ աղետի, ապա կ'անիծուի Աստուծոյ կողմից):

«Եհովայի վկաների» գաղափարախօսութեան տարածումը ահաւոր վտանգ է մեր ժողովրդի, պետութեան ու հաւատի համար: Նախ՝ նրանք իրենց հետեւորդներին արգելում են գէնֆի դիմել եւ գէնֆը ձեռքին պաշտպանել հայրենիքը, պետութիւնը, կեանքը, ազատութիւնն ու հաւատը: Նրանք մեր ժողովրդին գրկում են սեփական կեանքն ու Հայրենիքը պաշտպանելու իրաւունքից: Նրանք քայքայում են մեր պետութեան հիմքը: Երկրորդ՝ կան այդ աղանդի անդամների ինֆնասպանութեան նախադէպեր: Բոլորովին վերջերս Սիւնիֆի մարզում կախուել են այդ աղանդի անդամ 12 ամեայ երկու աշակերտներ: Կան նաեւ այնպիսի դէպքեր, երբ կանայք,

մայրերը հրաժարում են կատարել իրենց ընտանեկան պարտականությունները: Նրանք պարզապես դադարում են աշխատել, հրաժարում են հաշ պատրաստել, մաքրություն անել, խնամել երեխաներին եւ ամուսնուն: Դա հանգեցնում է ամուսնուն կնոջ լրիւ անհնազանդութեան կամ էլ հրաժարման այն երդումից, որ կինը տուել է քաղաքացիական կացութեան ակտերի գրանցման կամ եկեղեցում պսակադրութեան ժամանակ: Դա հանգեցնում է ընտանիքի, հետեւաբար՝ ազգի եւ պետութեան քայքայման:

Շեռվայի վկաների դէմ պայքարը ըստ իս համազգային, համապետական գործ է եւ բոլորիս խնդիրն է, որը պիտի լուծենք համատեղ: «Շեռվայի վկաներ» կազմակերպությունը մեծ արագութեամբ տարածում է Հայաստանում եւ փորձում է արմատակալել նաեւ արցախեան հողում:

Տեղի է ունենում ազգային արժեքների ակնյայտ նենգափոխում: Կայ խղճի եւ կրօնի ազատութեան հասկացություն: Զինուելով այդ օրէնքով, ոմանք կարծում են, որ իրաւունք չունենք որեւէ աղանդաւորական շարժում արգիլել կամ էլ պաշտօնապէս չգրանցել: Իսկ ինչպէ՞ս անուանել, եթէ ոչ մեր ազատութեան խախտում, բռնի ներխուժում մեր կեանքը, երբ մեքորդի կայարաններում մեզ են կաշում, կանգնեցնում փողոցում, մտնում մեր տները, մեր երեխաների տանում վտանգաւոր հանապարհով: Եւ մի՞թէ խղճի ազատութեան խախտում չէ ընտանիքի, պետականութեան հիմքերի քայքայումը: Մի՞թէ դա բռնութիւն չէ մարդու կամքի վրայ:

Ես՝ որպէս հայ, որպէս քրիստոնեայ, որպէս եկեղեցական, գտնում եմ, որ մեր ժողովրդի, մեր հայրենիքի եւ մեր հաւատի համար եկեր է ժամը փորձութեան: Կարծում եմ, մենք պիտի լաւագոյնս դուրս գանք այդ փորձութիւնից: Մենք պիտի

գիտակցենք եւ իմաստաւորենք մեր հայրերի պատմական փորձը, որոնց մի անգամ չէ բաժին ընկել նման փորձութիւնը: Յիշենք Աւարայրը, հետագայ դարերը: Մեր ժողովուրդը միշտ էլ պատրաստ է եղել ինքնագոհաբերման, պատրաստ է եղել կեանքը գոհել, մարմինը տալ, բայց ոչ հաւատը, ոչ իր հոգին: Հոգեւոր մաքանումների հարցերում մեր ժողովուրդը միշտ էլ անընկեղելի է եղել, եւ, յոյսով եմ, որ այսօրուայ ահեղ մարտում եւս մենք չենք սխալուի:

Ես դիմում եմ իմ սիրելի, իմաստուն, բարի եւ համբերատար ժողովրդին, մեր պետական այրերին, մտաւորականութեանը, մեր փառապանծ ռազմիկներին՝ այս հարցում պիտի միաւորենք բոլորիս ուժերը: Մենք պիտի զինուենք երկու հազարամեակի ընթացքում ժողովրդի կուտակած իմաստնութեամբ ու փորձով, պետական այրերի վնասակամութեամբ, մեր ռազմիկների արիութեամբ, մտաւորականութեան փայլուն ունակութիւններով եւ մեր Մայր Եկեղեցու հետ միասին փրկենք եւ մեր ժողովրդին, եւ մեր պետութիւնը, որպէս զի չընդունենք նեղի այս առաջին կնիքներից մէկը: Յոյսս դնում եմ մեր ժողովրդի իմաստնութեան եւ Աստուծոյ օրհնութեան վրայ: Ես վստահ եմ, որ այս անգամ եւս պատիւով դուրս կը գանք փորձութիւնից:

Աստուած մեզ բոլորիս օգնական:

Ամէն:

ՊԱՐԳԵՒ ԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ